Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ. ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ և ԴԻՋԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ, ENPI/2013/334643

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21, 2016, ԵՐԵՎԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

Ծրագիրն իրականացվում է ՕՔՍՖԱՄԻ հետ համատեղ:

ՏԶՀԿ-ն Ծրագրի շրջանակներում իրականացնում է.

- **Գյուղատնտեսության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական բյուջեների պարզեցումներ,**
- **Քաղաքականությունների շրջանակների վերլուծություններ,**
- **Ընտրված բյուջետային ծրագրերի մոնիտորինգ և գնահատում,**
- **ՔՀԿ-ների բյուջետային գրագիտության և վերլուծական կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներ:**

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտրված բյուջետային ծրագրերն են.

1. **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագիր**
2. **Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ**
3. **Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում (ներառյալ ՀՀ մարզերում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում ծրագիրը)**
4. **Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ**
5. **Գյուղական խորհրդատվական ծառայություններ**
6. **Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին**

ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն
- Քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն
- Հարակից ուսումնասիրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ
- Շահառուների և փորձագետների շրջանում ֆոքուս խմբային քննարկումներ
- Ծառայություն մատուցողների ուսումնասիրություն և հարցազրույցներ,
- Վիճակագրական ընտրանքային հետազոտություն՝ ԳՏ ՊԱԳԸՀ-2016:

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՏ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՊԱԳԸՀ) - 2016թ.

- Գյուղացիական տնտեսությունների դեմ առ դեմ, հարցաթերթի հիման վրա հետազոտություն,
- ստրատիֆիկացված, բազմափուլ, պատահական ընտրանքի մոդել,
- ընտրանքի ծավալը՝ 1800 ԳՏ,
- ընտրանքի սխալը՝ +/- 3.5 տոկոս,
- ընտրված գյուղական համայնքների թիվը՝ 100:

ՖԽՔ-ներ և ՀՏԱ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

- 4 մարզերում իրականացված 8 ֆոքուս խմբային քննարկումներ,
- ոլորտի հիմնական տեղեկացված անձանց հետ 32 հարցազրույցներ:

ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳԻՐ (ԳԽԾ)

- **ԳԽԾ բյուջետային ծրագիրը Հայաստանում ԳՏ-ների տնտեսվարման գիտելիքների և փորձի բարելավմանն ուղղված շարունակաբար իրականացվող պետական ծրագիր է:**
- **Ծրագիրն ուղղված է ԳՏ-ների ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան խորհրդատվության տրամադրմանը:**
- **Ծառայությունները մատուցվում են մարզերում գործող 10 ԳԱՄԿ-երի և ԳԱՀԿ կողմից:**
- **ԳԽԾ ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայություններն են.**
  - Խորհրդատվական միջոցառումներ
  - Սեմինարներ
  - Դաշտային ուսուցումներ
  - Փորձացուցադրական աշխատանքներ
  - Ռադիոհեռուստահաղորդումներ
  - Տեղեկատվական թերթիկների, բուկլետների տպագրում, թերթերի թողարկում:
- **Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում (ԳԱՄԿ).**
  - աշխատում են մոտ 160 մասնագետներ և խորհրդատուներ
  - սպասարկվում են թվով **914 համայնքների ԳՏ-ներ** (տարեկան միջինում 70 հազ. ԳՏ),
  - **մեկ խորհրդատուի կողմից սպասարկվում է միջինում 7 համայնք, կամ** տարեկան միջինում 550 ԳՏ):
- **«Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավումը» հանդիսանում է ԳԳԿԶՌ 17 գերակա ուղղություններից մեկը:**

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԾՐԱԳԻՐ (ՊԱԳՀ)

- ՊԱԳՀ բյուջետային ծրագրերը գյուղատնտեսական հողօգտագործողներին անուղղակիորեն սուբսիդավորման ծրագրեր են, որոնք **ուղղված են** ԳՏ-ների կողմից սպառվող **պարարտանյութերի և դիզելային վառելիքի ծախսերի կրճատմանը:**
- Ծրագրերն իրականացվում են հետևյալ կազմակերպությունների միջոցով:
  - **«Մասիսի բերրիություն»՝** ազոտական պարարտանյութերի մատակարար,
  - **«Հրաշք այգի»՝** ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատակարար,
  - **«Ֆլեշ» ՍՊԸ՝** դիզելային վառելանյութի մատակարար:

	սահմանված նորմա, 1 հա	**Գին**	**սուբսիդավորման մաս**
Դիզելային վառելանյութ	200լ	280 դրամ/լիտր	55 դրամ/լիտր
Ազոտական պարարտանյութ	300կգ/6 պարկ	6,000 դրամ/պարկ	2,730 դրամ/պարկ
Ֆոսֆորական պարարտանյութ	400կգ/8 պարկ	7,000 դրամ/պարկ	6,735 դրամ/պարկ
Կալիումական պարարտանյութ	150կգ/3 պարկ	7,000 դրամ/պարկ	6,799 դրամ/պարկ

Աղբյուր՝ ՀՀ կառավարության 29 հունվար 2016 թվականի N 59-Ն N 73-Ն որոշումներ

- ՊԱԳՀ ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի **ամենամեծ ծախսային ուղղությունն է՝** 3.1 մլրդ դրամ (23.1 տոկոս):

ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ



Աղբյուրը՝ ՏՋՀԿ

ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ



Աղբյուրը՝ ՏԶՀԿ

ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ



Աղբյուրը՝ ՏԶՀԿ

ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄՆԵՐԸ

ՄԺԾԾ-ով 2017-2019 թթ. ծրագրերի ֆինանսավորմանը պլանավորված է ուղղել գրեթե նույն ծավալի ռեսուրսներ:

	2016	2017	2018	2019
	Բյուջե	ՄԺԾԾ		
Գյուղական խորհրդատվական ծառայություններ	397	397	397	397
ՊԱԳՀ մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերում, մլն.դրամ	2,760	2,560	2,560	2,560
ՊԱԳՀ մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերում, մլն դրամ	330	330	330	330

Աղբյուր՝ ՀՀ 2016թթ. պետական բյուջեի մասին օրենք, 2017-2019թթ. ՄԺԾԾ

Մինչև 2020 թ-ը նախատեսվում է ավելացնել գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համաֆինանսավորման բաժինը, իսկ 2020-ին՝ անցնել ամբողջական ինքնաֆինանսավորման:

ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԳՏ-ՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- Հանրապետությունում **հողօգտագործման մակարդակը ցածր է**. սեփական հողատարածքն ամբողջությամբ մշակում է ԳՏ-ների 70 տոկոսը:
- ԳՏ-ների ավելի քան 59 տոկոսի կողմից մշակվող հողակտորի մակերեսը չի գերազանցում 1 հա-ն: ԳՏ-ների միայն 3.4 տոկոսի դեպքում է հողակտորը գերազանցում 5 հա-ն:
- **Ցածր է ԳՏ-ների մասնագիտացման մակարդակը**:
- **Ապրանքային տնտեսության մակարդակը ևս ցածր է.** ԳՏ-ների մոտ 18 տոկոսն արտադրված բերքն ընդհանրապես չի իրացնում: ԳՏ-ների միայն 19 տոկոսն է արտադրված բերքի մեծամասնությունը (80-100 տոկոսը) վաճառում կամ փոխանակում:
- Գյուղատնտեսությունից ստացվող **ԳՏ եկամուտները փոքր են** և չեն բավարարում ընտանիքի հոգսերը հոգալուն: Միայն ԳՏ-ների 4.2 տոկոսն է ստացված եկամուտը համարում լիովին բավարար: Տնտեսությունն ընդլայնելու համար միջոցներ է մնում ԳՏ-ների միայն 2.7 տոկոսին:
- Ցածր է ԳՏ-ների տեխնիկական զինվածությունը, կառավարման հմտությունները, առկա է շուկայավարման և գյուղատնտեսության վարման մասնագիտական գիտելիքների պակաս:
- ԳՏ-ներն իրենց **գործունեությունը հիմնականում համարում են ցածր արդյունավետ**: Դրա բարելավման գործում **խորհրդատվության դերը ԳՏ-ների կողմից գրեթե չի կարևորվում:**

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԽԾ. ԳՏ-ՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՄԿ-երի մասին լսել է և նրանց գործունեության մասին տեղյակ է ԳՏ-ների 20 տոկոսը:

ԳԱՄԿ-երի մասին

Մատուցվող ծառայությունների մասին



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԽԾ. ԳՏ-ՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԳԱՄԿ-երի կողմից վերջին երեք տարիների ընթացքում խորհրդատվական ծառայություններ է ստացել ԳՏ-ների ընդամենը 9.8 տոկոսը:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԾԽ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ծրագրի շահառու ԳՏ-ների մոտ 47 տոկոսը ստացած տեղեկատվությունը երբևէ չի օգտագործել իր ԳՏ վարման ընթացքում:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԽԾ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Չկիրառման հիմնական պատճառ են համարում այն, որ ստացված տեղեկատվությունը հիմնականում ոչ օգտակար է եղել կամ նոր գիտելիք չեն ստացել:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏՋՀԿ

ԳԽԾ. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվությունն օգտագործող ԳՏ-ների մեծ մասը դժվարացել է մեկնաբանել, թե ինչպես է այն օգտագործել:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԽԾ. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Մասնակիցների գերազանց մեծամասնությունը՝ 55 և ավելի տոկոսը, ծառայությունները գնահատել է միջին որակի կամ ավելի ցածր:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԾԽ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԳՏ-ՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԳՏ-ներն ավելի մեծ են և միջինում ավելի եկամտաբեր:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԾԽ. ԳՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Գյուղատնտեսական գործունեությունը գնահատում են համեմատաբար ավելի արդյունավետ:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԽԾ. ԳՏ-ՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

ԳՏ-ների մոտ 57 տոկոսը միջին եկամտային խմբերից են:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ԳԽԾ. ԳՏ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Ինքնագնահատականը գյուղատնտեսության վարման գիտելիքների վերաբերյալ համեմատաբար բարձր է:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ

ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ԳԱՄԿ-երի կազմակերպած միջոցառումներին գյուղացիների որոշակի **մասնակցություն ապահովելը հեշտ չէ**, և գյուղացիներին պետք է խնդրել ու համոզել:

- ԳԱՄԿ-երը **չեն կարողանում առաջարկել** ծառայությունների **պահանջված և որակյալ շրջանակ:** ԳԱՄԿ-երի տեղեկատվությունը հիմնականում **սահմանափակվում է** հիվանդությունները ախտորոշելու, բուժելու և կանխարգելելու, կրծողների դեմ պայքարելու, թունանյութերի ճիշտ օգտագործման շրջանակներում:

- Անհարժեշտ տեղեկատվությունը համացանցից կարող են թե՛ ստանալ, և թե՛ սովորել: **You Tube-ը** և մեկ նորմալ խորհրդատուն կարող են անել այդ ամբողջ գործը: Պարզապես հայալեզու նորմալ հոլովակներ են պետք:

- **ԳՏ-ները պատրաստ չեն վճարել** ԳԱՄԿ-երի մատուցած ծառայությունների դիմաց:

- Գյուղերում ավելի են կարևորում հենց **ՏԻՄ-երում մասնագետներ ունենալու պահանջը**, որոնք կլինեն գյուղում, գյուղացու կողքին և մշտապես հասանելի:

- ԳԱՄԿ-երի բացակայության դեպքում գտնում են, որ համայնքի ներկա չլուծված խնդիրներից **ոչինչ չի փոխվի**, որովհետև ԳԱՄԿ-երը ոչ մի խնդիր չեն լուծում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծրագրերից վերջին երեք տարիների ընթացքում մատչելի գներով որևէ կարգի պարատանյութեր են ձեռք բերել ԳՏ-ների 64.3 տոկոսը, իսկ դիզելային վառելիք՝ 15.6 տոկոսը:

Պարարտանյութեր



Դիզելային վառելիք



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ և ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՍՊԱՌՎԱԾ ՔԱՆԱԿՆԵՐԸ

Պարարտանյութերը կիրառվել են մշակվող հողատարածքների 59 տոկոսի վրա:

	2015		2016		
	միջին քանակ	ԳՏ-ներ, տոկոս	միջին քանակ	ԳՏ-ներ, տոկոս	ԳՏ օգտ. հողատարածք, տոկոս*
Ազոտական պարարտանյութ, պարկ	**8.3**	**56.0**	**8.9**	**50.3**	58.4
Ֆոսֆորական պարարտանյութ, պարկ	3.0	1.0	4.6	1.1	1.2
Կալիումական պարարտանյութ, պարկ	3.5	2.0	3.1	2.3	2.4
Դիզելային վառելանյութ, լիտր	188.1	13.1	193.4	11.9	**24.3**
Ընդամենը պարարտանյութեր, պարկ	8.4	56.4	9.1	50.8	**59.1**

*Տոկոս ընդամենը օգտագործված հողատարածքի մեջ
Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏՋՀԿ

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պարատանյութերից չօգտվելու հիմնական պատճառ է հանդիսացել պատվերի ձևակերպման ժամանակահատվածում ֆինանսական ռեսուրսների բացակայությունը՝ 57.4 տոկոս դեպքերում:

Պարարտանյութեր



Դիզելային վառելիք



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԱԾ ԳՏ-ՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ծրագրից օգտվող ԳՏ-ները ավելի մեծ են և միջինում ավելի եկամտաբեր:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Ծրագրերից օգտվող ԳՏ-ները իրենց տնտեսության արդյունավետությունը շատ ավելի բարձր են գնահատում:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Ծրագրերից օգտվող ԳՏ-ները մոտ 72 տոկոսը հանդիսացել է միջին և բարձր եկամտային խմբերից:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ՊԱՐՏՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրից օգտվող ԳՏ-ների պարտքային պարտավորությունները չօգտվողների համեմատ ավելի մեծ են:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Գյուղացու համար սուբսիդավորված գնով պարարտանյութերը շարունակում են մնալ թանկ:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՊԱԳՀ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳՏ-ների 25 տոկոսը կարևորվում է պարարտանյութերի դիմաց վճարման ժամկետները:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՊԱԳՀ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳՏ-ների մոտ 24 տոկոսը գտնում է, որ պարարտանյութերի որակը ցածր է և ավելի որակյալ պարատանյութերի կարիք կա:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՊԱԳՀ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

ԳՏ-ների 4.1 տոկոսը նշել է տրամադրման ժամանակացույցի խախտումների մասին:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՊԱԳՀ. ԳՏ-ՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՊԱԳՀ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Այլ նոր տեսակների պարարտանյութերի կարիքի մասին նշել է ԳՏ-ների 2.7 տոկոսը:



Աղբյուրը՝ ԳՏ-ների ՊԱԳԸՀ 2016, ՏԶՀԿ,

ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Թեև պարարտանյութերի բաշխման գործընթացը թափանցիկ է, սակայն նույն գնահատականը չեն կարող տալ արդեն պարարտանյութերի ձեռք բերման գործընթացի, դրա արդյունավետության և թափանցիկության վերաբերյալ:
- Պետության կողմից մատակարար ընկերության ընտրությունը իրականացվում է առանց մրցույթի հայտարարության և հետևաբար այլ ընկերությունները հնարավորություն չունեն ներգրավվել ծրագրում:
- Առկա են ավելի էժան ներմուծման հնարավորություններ:
- Պարարտանյութերի գներն իրականում ուռճացվում են, հետո սուբսիդավորվում, և անգամ դրանից հետո մենք գյուղացու համար ունենում ենք Վրաստանից ավելի թանկ պարարտանյութեր:
- Ոլորտի փորձագետների կարծիքով հնարավոր է պարարտանյութերի արտադրությունը կազմակերպել հենց Հայաստանում:
- Փորձագետները գտնում են, որ երկրում առկա քիմիական պարարտանյութերի պահանջարկը կարելի է բավարարել նաև Վանաձորի քիմիական գործարանի վերագործարկմամբ, որը տեխնիկապես պատրաստ է ազոտական և կալիումական պարարտանյութերի արտադրության համար:

ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Հողերի որակական վերլուծությունը կարևոր է: Մարդիկ հաճախ չգիտեն, թե ինչ պարարտանյութ է պետք այդ հողին և, քանի որ ավանդաբար լսել են ազոտական պարարտանյութի մասին (իրենց լեզվով ասած՝ սելիտրա), հենց դա էլ ուզում են:

- Համայնքների ղեկավարները ուռճացնում են մշակվող վարելահողերի քանակը, վերցնում են սուբսիդավորվող գներով վառելանյութը և վաճառում տեղի շուկայում՝ բենզալցակայաններին:

- Ծրագրերի հիմնական թերություններից մեկն այն է, որ գյուղացին վճարում է մի քանի ամիս ավելի շուտ, քան կստանա վառելիքն ու պարարտանյութը: Եթե պարարտանյութի համար մարդիկ ստիպված վճարում են, ապա դիզվառելիքը գերադասում են սեզոնի ընթացքում պարտքով վերցնել մոտակա բենզակայանից: Կանխավճարի մեխանիզմը պետք է ամբողջությամբ վերանայվի:

- Եթե հաշվի առնենք, որ հաճախ պատվերը ձևակերպելիս մարդիկ վճարում են վարկային միջոցներով, որոնք ներգրավվում են տարեկան մինչև քսան տոկոսով, ապա սուբսիդավորման արդյունավետությունն ընդհանրապես հարցականի տակ է:

ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԸ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վերջնական արդյունքի ցուցանիշներ

- Գյուղատնտեսության ոլորտում որակյալ և ժամանակի պահանջներին համապատասխան ենթակառուցվածքների զարգացում

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ

- Խորհրդատվական միջոցառումների քանակ
- Սեմինարների քանակ
- Դաշտային ուսուցումների քանակ
- Փորձացուցադրական աշխատանքներ
- Ռադիոհեռուստահաղորդումներ
- Տեղեկատվական թերթիկների, բուկլետների թեմաների քանակ
- Տեղեկատվական թերթիկների, բուկլետների տպաքանակ
- Թերթերի թողարկումների քանակ
- Թերթերի տպաքանակ
- Սեմինար-դասընթացներ խորհրդատուների և այլ շահառուների համար, քանակ
- Խորհրդատվության տրամադրում խորհրդատուներին և այլ շահառուներին, քանակ

ՈՒՂԵՑՈՒՑԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Վերջնական արդյունքի ցուցանիշներ

- ԳՏ-ների համախառն արտադրանքի ծավալի ավելացում
- Եկամուտների աճ գրանցած ԳՏ-ների կշիռ
- Նոր տեխնոլոգիաներով և գործելակերպով (ՆՏԳ) ԳՏ-ների կշիռ
- ՆՏԳ արդյունքում գրանցված բերքատվության, եկամուտների աճ

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ

- ԳՏ-ների քանակ (կշիռ)՝ ըստ կոնկրետ ծառայությունների ստացման
- ՆՏԳ աշխատող ԳՏ-ների քանակ, կիրառման հողակտորների մակերես, կշիռ
- Կանանց մասնակցությունը խորհրդատվական միջոցառումներին, տոկոս
- Մեկ խորհրդատուի կողմից սպասարկված ԳՏ-ների և ՆՏԳ ներդրած ԳՏ-ների քանակ
- ԳԱՄԿ-ի վճարովի ծառայություններից ստացվող եկամուտների աճ և կշիռ ընդամենը ԳԱՄԿ-երի բյուջեում, տոկոս:

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վերջնական արդյունքի ցուցանիշներ

- Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ

- Համայնքների քանակ
- Տրանսֆերտի վճարման հաճախականություն

ՈՒՂԵՑՈՒՑԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ

- Ծրագրում ընդգրկված ԳՏ քանակ, տոկոս ընդամենի մեջ
- Հողակտորների մակերես, տոկոս ընդամենի մեջ
- Պարարտանյութերի գինը, տոկոս շուկայական գնի նկատմամբ՝ ըստ պարարտանյութերի տեսակների

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործող համակարգը կառուցվածքային և որակական առումով **լուրջ փոփոխությունների կարիք ունի**: Մարզերում գործող բոլոր կառույցները պետք է որդեգրեն ռազմավարական միևնույն մոտեցումներն ու սկզբունքները և կառավարվեն մեկ միասնական կենտրոնից, որը կհանգեցնի ռեսուրսների էական տնտեսման:

ԳԱՄԿ-երը տեսլականի հստակեցման կարիք ունեն:

Առավել կոնկրետ առաջարկները հետևյալն են.

Թիրախային խմբի հստակեցում, հասցեավորված ծառայություններ

Թիրախային խմբի ուսումնասիրություն և անհրաժեշտ անվճար և վճարովի ծառայությունների վերհանում: Ծառայությունների փաթեթների մշակում:

Մեխանիզմների որոշում, որով ծառայությունները կհասնեն ֆերմերին:

Թիրախային խմբերի գնահատում, անկախ մոնիտորինգի դերը, շահառուների ելակետային և հետծրագրային վիճակ, ծառայությունների որակի գնահատման համակարգեր

Միավորել ԳԱՄԿ-երը հանրապետական կենտրոնի ենթակայության տակ՝ ստեղծելով միասնական կառույց:

Քննարկել յուր. 2-3 համայնքում միասին խորհրդատուի հաստիք ունենալու հնարավորությունը:

Վերանայել բյուջետային ծրագրի կատարողական (ոչ ֆին.) ցուցանիշները:

Ներդնել առցանց գործիքների և կապի միջոցների օգտագործումը ԳԽ տարածման գործիքակազմում:

Ջանքեր ներդնել ԳՏ-ների տեղեկացվածության բարձրացման և միջոցառումներին մասնակցության աճ ապահովելու ուղղությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

Սուբսիդավորման ծրագրի ծախսային արդյունավետությունը հիմնավորման կարիք ունի:

Արդյոք ռեսուրսների սուբսիդավորումը լավագույն ռազմավարությունն է՝ հաշվի առնելով առկա միջոցների խիստ սահմանափակությունը: Աջակցության գործիքներն անհրաժեշտ է ուղղել ռեսուրսների գների սուբսիդավորմանը, թե՞ ապրանքների:

Կառավարությունն իր գործիքներով պարարտանյութի շուկայում ստեղծում է շուկայի ձախողում: Այս գործիքի նման ձևով կիրառումը ընդհանրապես պետք է բացառել, քանի որ ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում Հայաստանում կարող է սահմանվել պարարտանյութի ավելի ցածր գին, քան հիմա սուբսիդավորված գինն է:

Առկա են թե՛ ներքին արտադրության զարգացման և թե՛ ավելի ցածր գներով պարարտանյութերը գյուղացուն հասցնելու հնարավորություններ:

Քննարկման առարկա պիտի դառնա ծրագրերին ուղղվող ռեսուրսների ներկա ծավալների ուղղորդումը դեպի ներքին արտադրություն: Հնարավոր է արդյոք առկա ռեսուրսներով կազմակերպել նույն պարարտանյութերի կամ փոխարինող պարարտանյութերի ներքին արտադրություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ

Եթե պարզվի, որ սուբսիդավորումը տեղին է, պետք է հետևել հետևյալ կանոններին.

Կանխավճարներ գյուղացին չի կարող տալ: Ֆինանսական խնդիրն իր համար ամենաէականն է: **Կանխավճարի մեխանիզմը պետք է բացառել**:

Պարարտանյութի իրացումը պետք է ուղեկցվի **հողերի և մշակաբույսերի հետազոտությամբ**՝ պարզելու համար տվյալ հողին և դրա վրա աճեցվող մշակաբույսին ամենահարմար պարարտանյութն ու դրա անհրաժեշտ քանակը:

Սահմանել գյուղատնտեսական քաղաքականության **առաջնային թիրախը** յուրաքանչյուր տարածաշրջանի համար: ԳՏ-ների միջին խավը գյուղատնտեսության զարգացման ապագան է և հենց այս տնտեսությունները պետք է թիրախավորվեն պետական աջակցության գործիքներն ընտրելիս: Իսկ փոքր արտադրողներին առավելապես սոցիալական աջակցության գործիքներ են պետք, քան տնտեսական:

Գնումների և մատակարարի ընտրության գործընթացը տարբեր ռիսկեր է պարունակում: Անհրաժեշտ է պարարտանյութեր մատակարարող ընկերության ընտրությունն այսուհետ իրականացնել **բաց և հրապարակային մրցույթների միջոցով՝** սահմանելով մասնակցության սահմանաչափեր:

Վերանայել բյուջետային ծրագրի կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշները՝ ներառելով ԳՏ-ների ընդգրկումը և միջոցառումների արդյունավետությունը բնութագրող նոր ցուցանիշներ՝ օգտվելով բերված ուղեցուցային ցուցանիշներից:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

www.EDRC.am
info@edrc.am